

ՆԱԽԱՐԱՍՈՒԹՅԱՆ ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ-ՀՆՉԵՐԱՆԳԱՅԻՆ ՏԻՊԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԵՎ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿՑ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Հարցը մասնագիտական գրականության մեջ հաճախ է արծարծվել: Սակայն առ այսօր տարակարծություններ կան նախադասության հաղորդակցական-հնչերանգային տեսակների կառուցվածքային-իմաստային հատկանիշների, հետևաբար նաև դրանց դասակարգման վերաբերյալ: Մեր այս աշխատանքը փորձ է եղած կարծիքները ընդհանուր համակարգի բերելու և նախադասության այդ տիպերի վերաբերյալ գեղարվեստական գրականությունից և կենդանի լեզվից քաղված փաստական նյութի հիմքի վրա որոշ բացատրություններ տալու:

Հաղորդակցման խոսքային հիմնական միավորը նախադասությունն է: Յուրաքանչյուր բանավոր խոսք ունի իր արտաբերման ձևը: Դրանով արտահայտվում են խոսողի վերաբերմունքը հաղորդվող նյութի և չրջապատի նկատմամբ, նրա հոգեվիճակը տվյալ պահին, ինչպես նաև խոսքի նպատակը և այդ նպատակին հասնելու արտասանական հնարները: Այդ վերաբերմունքը կարող է արտահայտվել տարբեր միջոցներով:

Ամեն մի դատողություն, հարցում, հրաման, իղծ, հորդոր և այլն արտահայտվում է նախ և առաջ հնչերանգի միջոցով: Թեև վերջինս արտասանական իրողություն է, սակայն նախադասությունների հնչերանգային տիպերի ձևավորման մեջ էական դեր են կատարում ոչ միայն նախադասության արտասանական առանձնահատկությունները: (Դրանք առավելապես պայմանավորված են խոսողի հաղորդակցական նպատակադրումներով, ինչպես նաև արտալեզվական այլ գործոններով): Կան կառուցվածքային մի շարք հատկանիշներ, որոնք զուգորդվում են նախադասության հնչերանգային հատկանիշներին, օրինակ՝ նախադասության բայ-ստորոգյալի արտահայտության ձևերը, մասնավորապես պարզ ստորոգյալի հատկանիշները: Նախադասության հնչերանգային տիպերի ձևավորմանը մասնակցում են նաև բառային-քերականական զանազան միջոցներ՝ վերաբերականներ, ծայնարկություններ, հարցա-հարաբերական դերանուններ, հոմանշների ընտրությունը, պատկերավորման-արտահայտչական միջոցները և այլն: Նախադասության հնչերանգային տեսակներն առանձնացնելիս պետք է հաշվի առնել ոչ միայն նախադասության արտասանական առանձնահատկությունները, այլև վերը նշված բառային և քերականական միջոցների գործածությունը:

Նախադասության հաղորդակցական-հնչերանգային տիպերին Մ. Աբեղյանն անդրադառնում է խոսքերի տեսակները քննելիս: Նա նույնպես առանձնացնում է խոսքի (նախադասության) չորս տեսակ: Ըստ ենթակայի և ստորոգյալի հարաբերության զանազանում է դրական և բացասական խոսքեր, բացասական խոսքի տարատեսակ է համարում արգելականով կազմությունը (Մի՛ գրիր), իսկ ըստ խոսակիցների հարաբերության՝ հաստատական և հարցական. հաստատականի տարատեսակներ է համարում և՛ հրամայական

(Գնա՛, ի՛մ որդի), և՛ պատմողական (Ու գնաց որդին) նախադասությունները: Ըստ լեզվաբանի՝ հարցական խոսքի տարատեսակները երեքն են՝ հավաստիական, լրացական և ճարտասանական՝ բոլորն էլ հարցական հնչերանգով¹:

Հետագայում մասնագիտական գրականության մեջ ավելի հստակեցվեց խնդիրը՝ ելակետ ունենալով և՛ նախադասության արտասանական յուրահատկությունները, և՛ բառային-քերականական միջոցների գործածությունը: Ըստ այդ սկզբունքի՝ ժամանակակից հայերենում առանձնացվում է նախադասությունների հնչերանգային չորս տեսակ՝ **պատմողական, հարցական, հրամայական, բացականչական**: Այս մոտեցմամբ ըղծական նախադասությունը դիտվում է բացականչականի տարատեսակ: Քերականների մեծ մասը (Ս. Արախամյան, Ս. Գյուլբուրդադյան, Ս. Ասատրյան, Վ. Առաքելյան, Լ. Եզեկյան և ուրիշներ²) հակված է ընդունելու նախադասությունների դասակարգման այս սկզբունքը: Ըղծականը՝ որպես առանձին տարատեսակ, արձանագրվում է որոշ աղբյուրներում³: Առանձնացվում են նաև խառը տիպի նախադասություններ, որոնք սովորաբար հանգամանորեն քննության չեն առնվում, քանի որ ձևավորվում են հնչերանգային տարաբնույթ բաղադրիչներով:

Պատմողական նախադասություն. չի ունենում ո՛չ հարցական, ո՛չ բացականչական, ո՛չ հրամայական հնչերանգ և արտահայտում է դատողություն, տեղեկություն: Հնչերանգը չեզոք է, սովորաբար՝ հանդարտ: Մասնագիտական գրականության մեջ պատմողական նախադասությունը գրեթե միշտ առաջինն է քննության առարկա դառնում՝ ակամա ձեռք բերելով ինչ-որ ելակետային կարգավիճակ: Սակայն պատմողական նախադասությունը ելակետային չի կարող համարվել, քանի որ ինքն էլ ունի իր բնորոշ հնչերանգը: Հնչերանգային տեսակների համակարգում գրոյական ձև չկա:

Պատմողական նախադասության ստորոգյալը կարող է արտահայտվել սահմանական, հարկադրական, ենթադրական, մասամբ նաև ըղծական եղանակների բայածներով, օրինակ՝ «Ու ես **հավատում եմ** մեր հնարած ստին, քե չենք կորցնի իրար» (ՊՍ), «**Սոռացել եմ** ես, **մոռացել է** քեզ օրերի միգում կուրացած հոգիս» (ԵԶ), «Ու գիտես, **կգա, կիջնի** երեկո, ու ցուրտ **կլինի, կլինի** մենակ» (ՍԿ), «**Պիտի տեսնեմ** կզգին այն, ուր սիրով լի՝ Ինձ հանդիպեց մի օր իմ Նավզիկեն...» (ԵԶ), «Կուզեի դժբախտությունը երջանկության նման ափեր **ուներնար**, որպեսզի պարզ **տեսնեիր**, քե որտեղ է նրա հորիզոնը» (ՀԺ):

Պատմողական նախադասություններով սովորաբար հաստատվում կամ ժխտվում է մի բան, բայց դա ամենին չի նշանակում, որ դրանք միշտ միայն հաստատական կամ ժխտական բովանդակություն են ունենում: Այդ նախադասությունների իմաստը կարող է լինել նաև երկբայական, ենթադրական և այլն. «Վկա են դարերն»՝ անցնող հերթով, որ ճշմարտությունն այս աշխարհում, կարող է ուշ գալ, կամ գալ հետո, բայց որ նա չգա՝ չի պատահում» (ԳԵ): Ըստ

¹ Տես Ս. Արեղյան, Հայոց լեզվի տեսություն, Ե., 1965, էջ 551–557:

² Տես Ս. Արախամյան, Ժամանակակից հայերենի քերականություն, Ե., 1969, էջ 354–378, Ս. Գյուլբուրդադյան, Ժամանակակից հայոց լեզու, Ե., 1988, էջ 64–82, Ս. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու, Ե., 1987, էջ 130–143, Լ. Եզեկյան, Հայոց լեզու, Ե., 2007, էջ 332–334 և այլն:

³ Տես Խ. Բաղիկյան, Ա. Պապոյան, Ժամանակակից հայոց լեզվի շարախոսություն, Ե., 2003, էջ 68–83, Ֆ. Խլղաթյան, Հայոց լեզու, 7–րդ դաս., Ե., 2000, էջ 38–40:

որում՝ այդպիսի բովանդակությունը հաճախ ձևավորվում է երկբայական, սաստկական, զղիջական և այլ վերաբերականներով. «**Գուցե** ժպտաս քո խոսքերով արծաթե եվ մութ սրտիս նոր խնդության լույս բերես», «Կարծես թե մեկը ինձ է երազում, **կարծես** կանչում է ինձ մի քնքուշ ձեռք» (ՎՏ):

Հարցական նախադասություն. նպատակն է հարցի միջոցով տեղեկություն ստանալ կամ ակնկալել վերաբերմունք, արտահայտել հուզական վերաբերմունք կամ խնդրանք և այլն: Նկատելի բազմազանություն է դրսևորում կառուցվածքային տեսակետից: Քանի որ հարցադրումը կարող է կատարվել մի քանի նպատակներով, ըստ այդմ էլ տարբերակում են տարատիպ հարցական նախադասություններ: Գ. Ջահուկյանը նախադասության հնչեղանգային տեսակները քննելիս առանձնացում է արտահայտության և բովանդակության պլաններ, այսինքն՝ ինչպես վերն ասվեց, այս դեպքում դարձյալ հաշվի են առնվում թե՛ հնչերանգային, թե՛ կառուցվածքային առանձնահատկությունները: Մ. Ասատրյանն առանձնացնում է հավաստիական հարցական, լրացական և ճարտասանական նախադասություններ⁴, իսկ Ս. Գյուլբուդաղյանն ավելի հանգամանորեն է անդրադառնում հարցին. «Հարցական նախադասությունները,— գրում է նա,— ըստ հարցնողի նպատակի լինում են **բուն հարցական**, երբ խոսողը չգիտի, տեղյակ չէ տվյալ իրողության, փաստի մասին և հարցնում է իմանալու համար: Այս դեպքում հարցմանը սովորաբար հետևում է պատասխանը, օրինակ՝ — Ի՞նչ է, սխալվո՞ւմ եմ:— Ինչպե՞ս կարող է սխալվել ձերը մեծությունը (ՆԴ):

Ճարտասանական-հարցական. սրանք ձևով հարցական են, բովանդակությամբ՝ հաստատական կամ ժխտական. օրինակ՝ «Գողը ի՞նչ կուզի՝ մութ գիշեր»:

Ժխտական-հարցական. հաճախ հարցական նախադասությամբ ժխտվում է որևէ իրողություն, օրինակ՝ Մի՞թե «Սմբատը թույլ կտա իրեն՝ այդպես վիրավորել մի անպաշտպան աղջկա» (ԱԸ):

Հաստատական-հարցական. որևէ իրողություն, փաստ է հաստատվում, օրինակ՝ «Բայց չէ՞ որ միշտ էլ երազ էր միայն պայծառ պատկերդ այս անպատում» (ՎՏ):

Հարցահուզական. արտահայտում են զարմանք, տարակուսանք, երազանք, ցանկություն, անտեղյակություն. օրինակ՝ «Մի՞թե վերջին պոետն եմ ես» (ՎՏ), «Ինչպե՞ս մարդ կարող է նայել ու չտեսնել» (ՆԶ)⁵: Վ. Առաքելյանը առանձնացնում է հավաստիական, հորդորական, ճարտասանական տեսակներ⁶, Լ. Եզեկյանը՝ բուն հարցական, լրացական, ճարտասանական⁷, իսկ Խ. Բաղդկյանը՝ բուն հաստատական, լրացական, հոետորական-ճարտասանական հարցում⁸:

Ընդհանրացնելով եղած կարծիքները և ելնելով մեր ձեռքի տակ եղած լեզվական նյութի տվյալներից՝ կարելի է պնդել, որ ժամանակակից հայերենում առանձնանում է հարցական նախադասության կառուցվածքային երեք տիպ.

⁴ Տես Գ. Ջահուկյան, ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Ե., 1974, էջ 355-359:

⁵ Տես Մ. Ասատրյան, նշվ. աշխ., էջ 132-137:

⁶ Տես Ս. Գյուլբուդաղյան, նշվ. աշխ., էջ 69-75:

⁷ Տես Վ. Առաքելյան, Հայերենի չարահյուսություն, հ. 1, Ե., 1958, էջ 14-21:

⁸ Տես Լ. Եզեկյան, նշվ. աշխ., էջ 333:

⁹ Տես Ա. Պապոյան, Խ. Բաղդկյան, նշվ. աշխ., էջ 69-73:

1) նախադասություններ, որոնք կառուցվածքով համընկնում են պատմողականին, բայց արտաբերվում են հարցական հնչերանգով («Փշրեցա՞վ, ուրեմն, այն հայելին ոսկեծիր» (Ս)), 2) նախադասություններ, որոնց մեջ կան հարցական վերաբերականներ, «Մի՞թե, մի՞թե պիտի քեզ գովերգեմ նորից, Քեզ, ում չեմ ուզում էլ երբևէ հիշել» (ԼԲ), 3) նախադասություններ, որոնց մեջ կան հարցական դերանուններ «Ինչո՞ւ, ինչո՞ւ զիս սիրեցիր» (ՌՍ), «Ընչի՞ չես խոսում, ընչի՞ չես նայում...» (ՀԹ)):

Այս նախադասություններն ունեն կառուցվածքային առանձնահատկություն. եթե դրանց մեջ կա օժանդակ բայով արտահայտված պարզ ստորոգյալ, ապա օժանդակ բայը անպայման տեղափոխվում է հարցական դերանունից կամ նրա բառախմբից հետո. «Տիեզերքի տերն եմ ես, Ո՞վ է արդյոք նկատել» (ՀԹ): Սակայն բաղադրյալ ստորոգյալի դեպքում այս փոփոխությունը չի կատարվում. «Մի՞թե դու չէիր, հայրենիք իմ հեզ, Որ տազնապներից, մթին յուր դերից...» (ԱԻ):


Իմաստային տեսակետից տարբերվում ենք բուն, լրացական և ճարտասանական հարցում: Գարտասանական հարցական նախադասությունը միայն ծնով և արտաբերման հնչերանգով է հարցական. սա ըստ էության հաստատական նախադասություն է, որը պարունակում է պատասխան. կիրառվում է միայն հուզականություն հաղորդելու և ուշադրություն գրավելու համար: «Բա սա մա՞րդ է. տղամարդը օրը ցերեկով կրնի՞» (ԺԱ): Ըստ որում, հարցումը կարող է լինել դրական և ժխտական:

Գարտասանական հարցն ունի մի յուրահատկություն ևս. դրական նախադասությունները կարող են արտահայտել ժխտում, իսկ ժխտականները՝ հաստատում, «Ո՞վ կարող է» = «Ոչ ոք չի կարող», «Ո՞վ չի կարող» = «Բոլորն էլ կարող են», կամ՝ «—Ի՞նչը կրիստոսի կյանքում հերոսին, Թե չլինին կինն ու զինին» (ՀԹ):

Հարցական նախադասություններում գործածվող վերաբերականներն ու հարցահարաբերական դերանունները մեծ մասամբ դրվում են նախադասության սկզբում: Սակայն սա պարտադիր կանոն չէ:

Հարցական նախադասությունների պարզ ստորոգյալը կարող է արտահայտվել սահմանական («Եթե սիրում է, ապա մի՞թե այսքան տարի մի օր պահանջ չգզաց սիրտը բացելու» (ԳՏԳ), ենթադրական («Կհեռանա՞նք, կմնա՞նք, թողնենք միայն դիպվածին» (ՍԿ), ըզծական («Թե իմանայիր՝ ինչ խռովահույզ ծամփաներով եմ տարել իմ սերը» (ՍԿ), հարկադրական («Իսկ ինչո՞ւ պետք է նա իր զաղափարներն ու միջոցները ներդնե՞ր ամբողջ խմբի համար») եղանակներով: Սովորաբար հարցում չի արտահայտվում հրամայական եղանակով. հրամայական եղանակի բայաձևը չի պնդվում հարցման տակ: Սակայն երբեմն, այնուամենայնիվ, այն իր վրա կրում է հարցում: Դա լինում է այն դեպքում, երբ խոսողը ցանկանում է որևէ պատճառով հարց տալ խոսակցի, որևէ մեկի կամ իր արտահայտած հրամայական եղանակի բայաձևի մասին, «Նա ասաց՝ գնա՞: Սա ըստ էության ինքնանվանողական գործառնություն գործածության դեպք է:

Հրամայական նախադասություն. արտահայտում է հրաման, ցանկություն, խնդրանք, հորդոր: Հնչերանգին բնորոշ է սուր շեշտը: Հրամայական նախադասության ստորոգյալն մեծ մասամբ արտահայտվում է հրամայական եղանակի դրական և արգելական ժամանակաձևերով, «Արի՛ քո պայծառ, պա-



ծառ հայացքով, սպասում են քեզ ամեն մի ժամի» (ԱՓ), «Աի՛ խմիր, որդիս, մի՛ խմիր այդքան...» (ՀԸ): Սակայն կարող է արտահայտվել նաև այլ եղանակների ժամանակաձևերով՝ սահմանական եղանակի անկատար ներկայի երկրորդ դեմքով և անցյալ կատարյալի հոգնակի առաջին դեմքով («Արագ գնում ես տուն, վերցնում իրերդ և վերադառնում», «Արագագրեք, սկսեցինք խաղը»), ենթադրական եղանակի ապառնի երկրորդ դեմքի դրական ձևերով («Անմիջապես կգնաս և ճամպուուկը կբերես»), հարկադրական եղանակի ձևերով («Հիմա շտապ պիտի գնաս տնօրենի մոտ»), ըղծական եղանակի ապառնիի հոգնակի առաջին դեմքով և երկրորդ դեմքի ժխտականի ձևերով («Գնանք, Վահան, այստեղ մենք այլևս անելիք չունենք», «Խնդրում եմ՝ հարգեք ձեր ընկերներին»): Հրամայական եղանակի բայաձևերով արտահայտված ստորոգյալ ունեցող նախադասությունների հնչերանգը ավելի կտրուկ է:

Բացականչական նախադասություն. արտահայտում է ռոբախություն, զարմանք, կոչ, հիացմունք, ափսոսանք և այլն: Արտաբերվում է բացականչական բարձրացող-իջնող հնչերանգով: Բովանդակության պլանում առանձնանում է նրանով, որ արտաբերվում է բացականչական հնչերանգով, իսկ արտահայտության պլանում՝ նրանով, որ իր կազմում սովորաբար ունենում է ծայնարկություններ, վերաբերականներ կամ էլ հարցահարաբերական դերանուններ, օրինակ՝ «Այ ապրես, Նազար, ո՞նց է քշում» (ԴԴ), «Հե՛յ, արևմուտքից մինչև արևելք Պիտի հրդեհեն ու քանդեն հիմա...», «Ա՛խ, սի՛րտ իմ՝ բո՛րբ ու անսփուփ», «Ի՛նչ տրտում է, կապույտ աղջիկ, հրաժեշտի երեկոն...» (ԵԶ): Եթե նշված խոսքի մասերից չունեն իրենց կազմում, ապա այդ դեպքում նման նախադասություններն արտահայտության պլանում, այսինքն՝ իրենց կառուցվածքով համընկնում են պատմողականներին, բայց արտաբերվում են բացականչական հնչերանգով, օրինակ՝ «Լուսամփոփի՛ պես աղջիկ՝ աստվածամոր աչքերով» (ԵԶ), «Կոտորած, կոտորած, կոտորած... Բաղաքներում մեջ և քաղաքներեն դո՛ւրս» (Ս):

Նախադասության ուրույն տեսակ է ճարտասանական բացականչությունը, որն իր հատկանիշներով շատ նման է ճարտասանական հարցին և հիմնականում տարբերվում է հնչերանգով: Ինչպես ճարտասանական հարցման, այնպես էլ ճարտասանական բացականչության դեպքում կա դրականի և ժխտականի հակադարձ կապ: Քերականական ժխտում ունեցող նախադասությունները կարող են արտահայտել դրական իմաստ, և հակառակը, օրինակ՝ «Ինչպե՛ս գնացիք նրա մոտ» = պետք է չգնայիք // «Ինչպե՛ս չգնայիք նրա մոտ» = պետք է գնայիք, կամ՝ «Ինչպե՛ս թողնել տունն ու քաղաքը անտեր, ...ինչպե՛ս խեղդել իսկ խռովը Սասնա տան» (ՍԿ):

Բացականչական նախադասությունների ստորոգյալը հիմնականում արտահայտվում է ըղծական եղանակի բայաձևերով, «Հաներ այս տանջող խռովքն իմ սրտից» (ՍԿ), «Որպես ուրու հալածական, որպես տեսիլ, **Տա՛Մ** պարանոցս կարոտին այն երկնուղե՜...» (ԵԶ): Կարող է արտահայտվել նաև այլ եղանակի ժամանակաձևերով, օրինակ՝ «Ա՛ռ, քեզ լինի չեմ ուզում» (հրամայական) (ԺԱ), «Հրաժեշտի քանի՛ երգ եմ քեզ նվիրել» (սահմանական) (ԼԲ) և այլն:

Ինչպես արդեն ասվեց, բացականչական նախադասություններից իր կառուցվածքային և հնչերանգային հատկանիշներով սկզբունքորեն չի տարբերվում ըղծական նախադասությունը: Այն, ինչպես բացականչականը, արտա-

հայտում է ցանկություն, մաղթանք, ակսոսանք, իղծ, տենչանք, հոգեկան ապրումներ և այլն, օրինակ՝ «Այսօր գթանք իրարու, խեղճ լինենք ու չամաչենք, Բախտ չտենչանք ու հեռու տարիները չհիշենք» (ՎՏ), «Թե աչքերս քեզ որոնեն, ես կփակեմ մութ կոպերով, որ աշխարհում քեզ չտեսնեն» (ՍԿ), «Ու պիտի այսպես քեզ տանեմ օրերի միջով իմ բոլոր» (ԼԲ): Այն լեզվաբանները, ովքեր ըղձականն առանձնացնում են իբրև նախադասության հնչերանգային առանձին տեսակ, նշում են կառուցվածքային և հնչերանգային որոշ տարբերակիչ հատկանիշներ. ըղձականները, ըստ նրանց, միայն իղծ են արտահայտում, այլ ոչ թե զարմանք, կոչ և այլն, և արտաբերվում են ավելի մեղմ հնչերանգով, քան բացականչականները:

Մ. Աբեղյանը ըղձականը որպես բայի հինգ եղանակներից մեկը դիտարկելիս նշում է, որ հրամայականով և ըղձականով կազմվում են ցանկության խոսքեր. «Բացի հրամայական եղանակներից, — գրում է նա, — ցանկության խոսքեր կազմվում են նաև ըղձական եղանակով. մինչ հրամայականն արտահայտում է բացարձակ հրաման կամ արգելք, ըղձականը ցույց է տալիս՝ փափագ ու տենչ, հորդոր ու դրդում, խնդիր, մաղթանք կամ մեղմ պատվեր մի բան անելու: Ըղձականը հաճախ հետևում ունենում է ցանկություն նշանակող մի բառ՝ **երանի, գոնե, գեթ, ուր է թե** և այլն¹⁶»: Ըղձական եղանակի կառույցին վերաբերող այս բնորոշումը կարող է նույն հաջողությամբ վերաբերել նաև նախադասության հնչերանգային բացականչական տիպին: Ըղձական նախադասությունը, իրոք, բավական մասն է բացականչականին, և երբեմն դժվար է հստակ տարբերակելը, մասնավաճ, եթե նախադասությունը իր կազմում չունի իղծ, ցանկություն, փափագ արտահայտող ձայնարկություն կամ վերաբերական, ինչպես հետևյալ օրինակում՝ «Մոռանա՛լ, մոռանա՛լ ամեն ինչ, ամենին մոռանա՛լ, չսիրե՛լ, չխորհե՛լ, չափսոսա՛լ, հեռանա՛լ» (ՎՏ):

Գրավոր և հատկապես բանավոր խոսքում տարբեր երանգի նախադասություններ կարող են հանդես գալ համակցված կերպով, և նույն կառույցում ունենում ենք թե՛ մեկ և թե՛ մյուս երանգի նախադասություն, օրինակ՝ «Ասում էի՝ գնա՛, գնա՛, բայց դե ինչո՛ւ դու գնացիր. Ասում էի՝ «էլ մի՛ մնա», բայց դու ինչո՛ւ չմնացիր. Աչքերիս մեջ դողմ արցունքի՝ ասում էի «Հավատա՛ ինձ», Դու աչքերիս հավատայիր, խոսքիս ինչո՛ւ հավատացիր» (ՍԿ), «Ի՞նչ ես տանջում. կամ թույլ եղիր, կամ արի՛: Կամ հեռացիր, ընդմիշտ գնա, կամ արի՛: Թե չէ՝ այդպես դու նման ես չփված, Բայց ուր որ է գլխիս թափվող կամարի» (ՊՄ): Սրանք համարվում են **խառը տիպի նախադասություններ**: Դրանց յուրահատկությունն այն է, որ համատեղում են տարբեր բնույթի նախադասությունների տարրեր:

Ըստ կազմության՝ խառը նախադասությունները լինում են պարզ և բարդ: Պարզ նախադասություններում տարբեր հնչերանգով են արտաբերվում տարբեր անդամներն ու միավորները: Իսկ բարդ նախադասություններում յուրաքանչյուր բաղադրիչ նախադասություն կարող է ունենալ մյուսից տարբեր հնչերանգ: Առանձին վերցված յուրաքանչյուր բաղադրիչը էական առանձնահատկություն չունի, ուստի հնչերանգային տարբեր տեսակները քննելիս միշտ էլ բերվում են նաև խառը նախադասությունների օրինակներ, և նկատի է առնվում տվյալ դեպքում անհրաժեշտ բաղադրիչը:

¹⁶ Մ. Աբեղյան, Նշվ. աշխ., էջ 557, 590–600:

Բարդ համադասական նախադասություններում ըստ էության սահմանափակումներ չկան: Ձուգորդումների սահմանափակումներ կան բարդ ստորադասական նախադասություններում, երբ կապակցվում են տարբեր հնչերանգներով գերադաս և ստորադաս նախադասություններ: Որոշակի սահմանափակումներ են առաջանում, եթե գլխավորը մի բնույթի է, երկրորդականը՝ մեկ այլ: Բարդ ստորադասական նախադասության կառուցվածքում գլխավոր և երկրորդական նախադասությունների զուգորդումները արտահայտվում են բազմազան կաղապարներով՝ պատմողական + պատմողական («Գնաց տուն, որ դասերը սովորի»), պատմողական + հարցական («Վերջապես սա մարտահրավեր էր՝ նետված ողջ հասարակությանը. հստակ առ այն, թե ով է դրության իրական տերը՝ ռեժիսոր, թե՞ օրինաչափությունը»), պատմողական + բացականչական («Կտեսնես, թե ինչ կլինի»), պատմողական + հրամայական («Ասացի՛նք, որ կգնա տուն»), հարցական + հարցական («Մնո՞ւմ ես, որպեսզի չգնա՞ս»), հարցական + պատմողական («Ինչ որ ցանկաս՝ Կուզես լինիմ»), հարցական + բացականչական («Լսո՞ւմ ես, թե ինչ մեղեդի է»), հարցական + ըղձական («Ի՞նչ կլինի, որ գայի»), բացականչական + պատմողական («Էնքա՛ն ասացիք՝ առանց դրա չի լինի, որ վերջը համաձայնեցի»), և այլն: Ժամանակակից հայերենում, ըստ մեր ուսումնասիրության արդյունքների, չեն գործում հետևյալ կաղապարները՝ պատմողական + ըղձական, հարցական + հրամայական, բացականչական + բացականչական, բացականչական + հրամայական, հրամայական + հրամայական, հրամայական + հարցական, հրամայական + ըղձական: Ձուգորդումների այսպիսի սահմանափակումները ցույց են տալիս, որ իրար կապակցվող շարահյուսական մի շարք կառույցների զուգորդելիությունը պայմանավորված է հնչերանգով, և որ հնչերանգը առհասարակ կարևոր դեր ունի շարահյուսական կառույցների ձևավորման մեջ:

Այսպիսով, հաշվի առնելով նախադասության հնչերանգային տեսակների արտասանական և կառուցվածքային յուրահատկությունները, ինչպես նաև դրանցում բառային-քերականական և լեզվական այլ միջոցների գործածությունը՝ իբրև նախադասության հաղորդակցական-հնչերանգային տեսակներ կարելի է առանձնացնել չորսը՝ պատմողական, հրամայական, հարցական, բացականչական-ըղձական: Խառը տիպերն ըստ էության հնչերանգային տարբեր ձևակերպումների զուգորդելիությամբ կառույցներ են և սկզբունքորեն չեն կարող դիտվել նախադասության հաղորդակցական-հնչերանգային առանձին տեսակ. դրանց դրսևորվման ձևերը բարդ նախադասություններն են և առավելապես բարդ ստորադասական նախադասությունները՝ իրենց կառուցվածքային սահմանափակումներով:

Համառոտագրություններ

- ԱԻ – Ավետիք Իսահակյան
- ԱՇ – Ալեքսանդր Շիրվանզադե
- ԱՓ – Ալբերտ Փարսադանյան
- ԳՏԳ – Գրիգոր Տեր-Գրիգորյան
- ԴԴ – Դերենիկ Դեմիրճյան
- ԵՉ – Եղիշե Չարենց
- ԺԱ – Ժիրայր Անանյան
- ԼԲ – Լևոն Բլբուլյան

ՀԹ – Հոսկհաննես Թումանյան
ԺՀ – Ժաննա Հակոբյան
ԼԴ – Լար-Դոս
ԼԶ – Լաիր Զարյան
ՊՍ – Պարույր Սևակ
ՌՍ – Ռուբեն Սևակ
Ս – Սիմանյոն
ՍԿ – Սիլվա Կապուտիկյան
ՎՏ – Վահան Տերյան

К. АВЕТИСЯН

СТРУКТУРНЫЕ И СМЫСЛОВЫЕ ОСОБЕННОСТИ КОММУНИКАТИВНО—ИНТОНАЦИОННЫХ ТИПОВ ПРЕДЛОЖЕНИЯ В СОВРЕМЕННОМ АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

На сегодняшний день есть разногласия относительно структурно—смысловых признаков коммуникативно-интонационных видов предложения, следовательно и относительно их классификации. Эта статья является попыткой свести существующие мнения в общую систему и дать определенное толкование относительно этих типов предложений на основе фактического материала, взятого из художественной литературы и живого языка.

Вывод следующий: при обособлении коммуникативно-интонационных видов предложения нужно учесть не только артикуляционные и структурные особенности, но и употребление иных лексико-грамматических языковых средств. С помощью этого подхода выделяются четыре коммуникативно-интонационных типа предложений: повествовательный, повелительный, вопросительный, восклицательно-желательный. Что касается так называемых смешанных типов, они, по сути, являются сочетаниями различных интонационных форм и принципиально не могут рассматриваться как отдельный интонационный вид предложения.

К. АВЕТИСЯН

COMMUNICATIVE INTONATIONAL MODELS PECULIARITIES OF STUCTURAL AND SEMANTIC IN MODERN ARMENIAN

There have been a lot of divergent opinions concerning communicative intonational models, their structural and semantic peculiarities and consequently concerning their classification. The purpose of this article is that of existing theories systematizing and commenting on those types of sentences which have been collected from literature and spoken language.

We have come to the conclusion that separating the communicative intonational models not only should pronunciation and structure be taken into account, but also lexical-grammatical and other language means. With such an approach we can set apart 4 groups of communicative-intonational models: narrative, imperative, interrogative, exclamatory-optative. What about mixed types, they are actually combinations of different models, and in principle cannot be considered separate intonational types of sentences.